ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«Է Ն - Ա Ո Ւ Դ Ի Տ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA
" N – AUDIT "

LIMITED LIABILITY
COMPANY

375002, Երեւան, Թումանյան¬40/28
375002, Yerevan, st. Tumanyan-40/28

Հեռ. ☎ (37410) 53-40-41, (37491,94) 40¬80¬41

Աուդիտորական ծառայությունների
իրականացման
Լիցենզիա 007, 06.06.2002թ

07.03.2018թ.

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գավառի պետական համալսարան»
հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Մեր կողմից աուդիտի է ենթարկվել «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կից ներկայացվող 2017 թվականի գործունեության հաշվետվությունը, որը ներառում է 2017թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի և դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափի վերաբերյալ տեղեկություններ:

Հաշվետվության համար ղեկավարության պատասխանատվությունը

Նշված հաշվետվությունը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան կազմելու և արժանահավատ ներկայացնելու համար պատասխանատվություն է կրում հիմնադրամի ղեկավարը: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

Աուդիտորի պատասխանատվությունը և աշխատանքների բնույթի նկարագիրը

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք հաշվետվության վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոններ, աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք հաշվետվությունը էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են աուդիտորի դատողության վրա հիմնված ընթացակարգերի իրականացում, որոնք ուղղված են հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռքբերմանը: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը և հաշվետվության ներկայացման ընդհանուր գնահատումը:

Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կ ա ր ծ ի ք

Մեր կարծիքով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կողմից կազմված հաշվետվությունը, բաղկացած իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի և դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափի վերաբերյալ տեղեկություններից, բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացված և կազմված է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Գործադիր տնօրեն / Աուդիտոր `...Վ. Նիկողոսյան

Աուդիտոր` ....Ն. Ալեքսանյան

«Գավառի պետական համալսարան» Հիմնադրամի
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	270,313	312,983
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	**270,313**	**312,983**
Ընթացիկ ակտիվներ		
Հետաձգված հարկային ակտիվներ	0	3,650
Պաշարներ	3,349	3,476
Շահութահարկ	3,222	3,830
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	94,196	78,806
Դրամական միջոցներ և համարժեքներ	52,503	40,016
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	**153,270**	**129,778**
Ընդամենը ակտիվներ	**423,583**	**442,761**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Պահուստներ		
Կուտակված արդյունք	11,069	17,088
Ընդամենը պահուստներ	**11,069**	**17,088**
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Ակտիվների վերաբերող շնորհներ	285,403	296,844
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	**285,403**	**296,844**
Ընթացիկ պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	110,503	111,825
Կրեդիտորական պարտքեր բյուջեին	10,387	9,575
Աշխատավարձի գծով հատուցումներ	183	2,145
Եկամուտների վերաբերող շնորհներ	6,038	5,284
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	127,111	128,829
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	**423,583**	**442,761**

Ռուզաննա Հակոբյան
Ռեկտոր

Գուրգեն Մուրադյան
Գլխավոր հաշվապահ

«Գավառի պետական համալսարան» Հիմնադրամի
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Հասույթ	399,332	394,343
Իրացված ապրանքների և ծառայությունների ինքնարժեք	(166,558)	(448)
Իրացման ծախսեր	(16,149)	(16,475)
Վարչական ծախսեր	(208,225)	(364,088)
Եկամուտներ շնորհներից	51,944	50,914
Շնորհների գծով ծախսումներ	(51,944)	(50,914)
Այլ եկամուտներ	81	201
Այլ ծախսեր	(5,584)	(4,842)
Գործառնական գործունեությունից շահույթ	**2,897**	**8,691**
Ֆինանսական եկամուտներ	2,047	1,785
Ֆինանսական ծախսեր	(380)	(170)
Զուտ օգուտ (վնաս) փոխարժեքային տարբերություններից	2,075	(809)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	**3,742**	**9,497**
Շահութահարկի գծով փոխհատուցում (ծախս)	(3,650)	3,650
Շահույթ տարվա համար	**2,989**	**13,147**
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	**2,989**	**13,147**

Ռուզաննա Հակոբյան
Ռեկտոր

Գուրգեն Մուրադյան
Գլխավոր հաշվապահ

«Գավառի պետական համալսարան» Հիմնադրամի
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Արտադրանիք, աշխատանքների և ծառայությունների իրացումից դրամական մուտքեր	382,576	416,119
Գործառնական գործունեությունից այլ մուտքեր	30,060	32,428
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	**412,636**	**448,547**
Ընդհանուր վարչական և աշխատակազմի գծով ծախսեր	(402,228)	(420,365)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ մինչև շահութահարկի վճարումը	**10,408**	**28,182**
Վճարված շահութահարկ	-	-
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	**10,408**	**28,182**
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(2,043)	(8,797)
Ստացված տոկոսոներ	2,047	1,785
Ներդրումային գործունեությամբ օգտագործված դրամական միջոցների հոսքեր	**4**	**(7,012)**
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Ստացված վարկեր և փոխառություններ	-	-
Վարկերի և փոխառությունների մարում	-	-
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից	-	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**10,412**	**21,170**
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	2,075	(809)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	40,016	19,655
Դրամական միջոցները և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	**52,503**	**40,016**

Ռուզաննա Հակոբյան
Ռեկտոր

Գուրգեն Մուրադյան
Գլխավոր հաշվապահ

հազ. դրամ	Կուտակված արդյունք
Մնացորդը առ 1 հունվարի 2016թ.	228,693
Ընդամենը համապարփակ եկամուտ	
Շահույթ տարվա համար	13,147
Ուղղակիորեն պահուստներում գրանցված գործարքների ուղղում	
Ամրացված շենքերի արժեքի տեղափոխում ակտիվներին վերաբերող շնորհներ	(224,752)
Ընդամենը ուղղակիորեն պահուստներում գրանցված գործարքների ուղղու	(224,752)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.	17,088
Մնացորդը առ 1 հունվարի 2017թ.	17,088
Ընդամենը համապարփակ եկամուտ	
Շահույթ տարվա համար	2,989
Ուղղակիորեն պահուստներում գրանցված գործարքների ուղղում	
Ամրացված շենքերի արժեքի տեղափոխում ակտիվներին վերաբերող շնորհներ	(9,008)
Ընդամենը ուղղակիորեն պահուստներում գրանցված գործարքների ուղղու	(9,008)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017թ.	11,069

Ռուզաննա Հակոբյան
Ռեկտոր

Գուրգեն Սուրադյան
Գլխավոր հաշվապահ